ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/166

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
Մասնակից՝ «Էլար Գոլդ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9859-2021 գրությամբ «Էլար Գոլդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 08.06.2021թ.-ի թիվ 39/02-27-396 գրության հիման վրա, 17.06.2021թ.-ին «Էլար Գոլդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 17.06.2021թ.-ին:

18.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/166 համարի ծածկագիրը:

25.06.2021թ.-ին, 07.07.2021թ.-ին և 16.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 07.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.07.2021թ.-ին:

2. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն 08.06.2021թ.-ի թիվ 39/02-27-396 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ 2021 թ.-ի մայիսի 21-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 12:00-ին տեղի է ունեցել ապրանքների ձեռքբերման ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը:

«ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 9718026114, Հեռ.՝ +79606117771, էլ. Հասցե՝ elargold@yandex.ru) կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես հայտից բացակայում էր սույն գնման ընթացակարգի հրավերով պահանջված Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և 31.05.2021 թ.-ին համակարգի միջոցով ծանուցմամբ «ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին ներկայացվել է հայտից բացակայող Հավելված 1.1-ը, սակայն 6-րդ չափաբաժնի մասով արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝ շարժիչի հզորությունը ներկայացվել է 1,7 կվտ, երկարությունը՝ 1170մմ, լայնությունը՝ 1770մմ, բարձրությունը՝ 6մմ, մինչդեռ սույն գնման ընթացակարգի հրավերով պահանջվել էր համապատասխանաբար հզորությունը՝ 1կվտ, երկարությունը՝ 1000մմ, լայնությունը՝ 1900մմ, բարձրությունը՝ 700մմ:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի հայտը 6-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների «ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ծեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում և հրապարակված են տեղեկագրում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Էլար Գոլդ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Էլար Գոլդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 18.06.2021թ.-ի գրությամբ դիմել է «Էլար Գոլդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9859-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը 25.06.2021թ.-ին ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ (այսուհետև նաև՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Էլար Գոլդ» ՍՊԸ-ին (այսուհետև նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետև նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՑ-ԼՕ-2021/166 ծածկագրով ընթացակարգը (այսուհետև նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 08.06.2021թ. թիվ 39/02-27-396 գրությունը (այսուհետև նաև՝ Գրավոր հիմքեր):

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած Գրավոր հիմքերը՝ հայտնում ենք, որ ամբողջությամբ առարկում ենք դրանց դեմ:

1. Գրավոր դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստերը

1.1. 14.05.2021թ.-ին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով (այսուհետև նաև՝ էլեկտրոնային համակարգ) Պատվիրատուն հրապարակել է թիվ ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետև նաև՝ Մրցույթ):

1.2. Մրցույթի 6-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում՝ էլ. պտուտակադարձիչ (այսուհետև նաև՝ Գնման առարկա), որի տեխնիկական բնութագիրը հետևյալն է. «էլ. պտուտակադարձիչ օգտագործվում է Մետրոպոլիտենի ուղղեպտուտակների ձգման և քանդման աշխատանքների համար: Շարժիչի հզորությունը-1 կվտ, լարումը-220 վտ երկարությունը-1000 մմ, լայնությունը-1900 մմ, բարձրություն-700 մմ, քաշը 63 կգ, երաշխիքը 24 ամիս»:

1.3. Մասնակիցը Գնման առարկայի մասով Մրցույթին ներկայացրել է հայտ (այսուհետև նաև՝ Հայտ), առաջարկելով՝ 1.7 կվտ հզորությամբ ШВ2М էլ. պտուտակադարձիչ: Հայտով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը Պատվիրատուն գնահատել է անբավարար և մերժել է:

2. Պատվիրատուի Գրավոր հիմքերի դեմ առարկության հիմքերը և փաստարկները.

2.1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև նաև՝ Օրանք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝

«1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.»

«Նորմատիվ իրավական ակտերի» մասին ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:»

Վերոգրյալից հետևում է, որ գնման գործընթացի նպատակն է համարժեք հատուցմամբ ձեռքբերել պատվիրատուի պահանջմունքներին համապատասխանող ապարանք, այն է՝ ապրանք, որը իր որակական և տեխնիկական հատկանիշներով պիտանի է ծառայեցնելու պատվիրատուի լիազորությունների սահմաններում իրականացվող գործողություններին:

Ինչպես երևում է սույն Հայտին կից տեխնիկական բնութագրից, Մասնակիցը առաջարկել է Պատվիրատուին ապրանք, որը մեր կարծիքով ամբողջությամբ պիտանի է Պատվիրատուի պահանջմունքները բավարարելու համար, քանի որ Մասնակցի առաջարկած ապրանքի տեխնիկական ցուցանիշները ավելի բարձրեն քան հրավերով սահմանված ապրանքի ցուցանիշները, մասնավորապես՝ 1 կվտ փոխարեն Մասնակիցը առաջարկվել է 1,7 կվտ հզորությամբ ապրանք, ընդ որում առաջարկվող ապրանքը ունի

նույն քաշը ինչ նշված է Հրավերով, այսինքն՝ ապրանքը (գործիքը) օգտագործող անձը այն տեղափոխելու կամ օգտագործելու ժամանկ չի գործադրելու լրացուցիչ ջանքեր, մինչդեռ պայմանավորված առաջարկվող ապրանքի ավելի բարձ հզորությամբ այն աշխատեցնելը լինելու է ավելի հեշտ և արդյունավետ: Հաշվի առնելով նշյալը կարծում ենք, որ Մասնակցի Հայտը ըստ էության համապատասխանում է հրավերին, քանի որ Հայտը ներկայացվել է՝ Հայտում նշված ապրանքը առաջարկվել է հաշվի առնելով Օրենքի և կազմակերպված Մրցույթի բուն նպատակը, այն է՝ Պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքի ձեռքբերումը: ՈՒստի կարող ենք փաստել, որ Մասնակիցը Մրցույթին մասնակցել է Օրենքին և Մրցույթի բուն նպատակին համապատասխան և վերջինիս Հայտը ենթակա չեր անբավարար գնահատման, առավել ևս Մասնակիցը ենթակա չէ Ցուցակում ներառման, քանի որ առաջարկելով ավելի բարձր տեխնիկական ցուցանիշներ ունեցող ապրանք վերջինս Մրցույթի շրջանակներում սպանձնած պարտավորություն չի խախտել:

2.2. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3 կետերի համաձայն՝

«2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.»:

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետև նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Վերոգրյալից հետևում է, որ գնման գործընթացը կազմակերպելիս պատվիրատուն պետք է կազմի գնման առարկայի տեխնիկական բնութագիր, որը պետք է լինի օբյեկտիվորեն հիմնավորված, ոչ խտրական, բավարարի առնվազն երկու հնարավոր մասնակիցների և արտադրողների կողմից առաջարկվող ապրանքներին, և չառաջացնի չհիմնավորված խոչընդոտներ գնման գործընթացում: Այսինքն՝ պատվիրատուի կազմած

տեխնիկական բնութագիրը Օրենքի պահանջներին համապատասխանող կարող է համարվել միայն այն դեպքում, երբ այն համապատասխանում է նշված բոլոր պայմաններին իսկ պայմաններից որևէ մեկին չհամապատասխանելու դեպքում տեխնիկական բնութագիրը համարվելու է Օրնքին հակասող, որպիսի պայմաններում կարելի է եզրահանգել, որ գնման գործընթացը անց է կացվել Օրենքով սահմանված կանոնների խախտմամբ, և այն շահագրգիռ անձի կողմից դատարնում վիճարկելու արդյունքում կարող է ճանաչվել անվավեր: Իսկ ինչպես գիտենք, անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների: Նշյալից էլ կարող ենք հետևություն անել, որ Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի խախտմամբ կազմակերպված գնման գործընթացը և այդ գործընթացից ածանցվող որոշումները ի սկզբանե անվավեր են:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից, Պատվիրատուն Գնման առարկայի բնութագիրը՝ չափերը, քաշը, հզորությունը նշել է առանց միջակայքերի, որպիսի պայմաններում կարելի է եզրահանգել, որ այդ տեխնիկական բնութագրին համապատասխանում է մայն մեկ տեսակի ապրանք: Ստացվում է, որ Պատվիրատուի կազմած տեխնիկական բնութագիրը հակասում է Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3 կետերով և Կարգի 22-րդ կետով սահմանված բոլոր պայմաններին: Մասնավորապես՝ տեխնիկական բնութագիրը միայն մեկ ապրանքի համար կազմելով՝ Պատվիրատուն.

- սահմանափակել է այլ տեխնիկական ցուցանիշներով ապրանքներ առաջարկող Մասնակիցների մասնակցությունը Մրցույթին, անգամ ավելի բարձր ցուցանիշներ ունեցող ապրանք առաջարկող Մասնակիցների մասնակցությունը,

- առաջացրել է մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ, քանի որ Մրցույթին չեն կարող մասնակցել այն Մասնակիցները որոնք առաջարկում են ավելի բարձր տեխնիկական ցուցանիշներով ապրանք,

- խախտել է՝ Գնման առարկայի տեխնիկական բնութագրի օբյեկտիվորեն հիմնավորված լինելու սկզբունքը, քանի որ ինչպես պարզեցինք վերոգրյալով, օրինակ՝ Մասնակցի առաջարկած ապրանքը իր նպատակային օգտագործման համար ավելի արդյունավետ է, քան Հրավերով պահանջվածը,

- խախտել է՝ Գնման առարկայի տեխնիկական բնութագիրը առնվազն երկու հնարավոր մասնակիցների և արտադրողների կողմից առաջարկվող ապրանքների նկարագրերին համապատասխան լինելու սկզբունքը:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից կարող ենք փաստել, որ Մրցույթը անց է կացվել Օրենքի և Կարգի վերը նշված նորմերի խախտմաբ և այն շահագրգիռ անձի կողմից

դատարանում վիճարկելու արդյունքում կարող է ճանաչվել անվավեր: Իսկ ինչպես գիտենք, անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների: Նշյալից էլ կարող ենք հետևություն անել, որ Մրցույթը և Մրցույթից ածանցվող որոշումները ի սկզբան է անվավեր են և իրավաբանական ուժ չունեն: Հետևաբար նման խախտումներով կազմակերպված մրցույթից բխող բացասական հետևանքները՝ ինչպիսին է այս Ընթացակարգը չեն կարող մեկնաբանվել ի վնաս մասնակցի: Ուստի կարծում ենք, որ սույն Ընթացակարգի շրջանակներում Մասնակիցը ենթակա չէ Ցուցակում ներառման:

2.3. Ամփոփելով վերոգրյալը կարող ենք եզրահանգել, որ Մրցույթի շրջանակներում Մասնակիցը գործել է բարեխիղճ, Օրենքին և Մրցույթի բուն նպատակին համապատասխան, ուստի նման պայմաններում խնդրում ենք՝ Մասնակցին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերությամբ նախատեսված խախտում: Ավելին՝ ստացվում է, որ Մասնակցի Հայտը մերժվել է ոչ թե վերջինիս ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով, այլ այն պատճառով, որ Պատվիրատուն Գնման առարկայի տեխնիկական բնութագիրը կազմել է խախտելով Օրենքի և Կարգի դրույթները:

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 50-րդ հոդվածով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Էլար Գոլդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ԼՕ-2021/166 ծածկագրով ընթացակարգը:»:

«Էլար Գոլդ» ՍՊԸ-ն 08.07.2021թ.-ի ներկայացված դիրքորոշման լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Առաջնորդվելով ՀՀ ֆինանսների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 600-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 19-րդ կետով, «Էլար Գոլդ» ՍՊԸ-ն ներկայացնում է սույն դիրքորոշման լրացումը՝ ՍՑ-ԼՕ-2021/166 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը նախաձեռնելու համար ՀՀ ֆինանսների նախարարություն Պատվիրատուի ներկայացրած 08.06.2021թ. թիվ 39/02-27-396 գրության (այսուհետ նաև՝ Գրություն) 1-ին էջի ներքևի հատվածում առկա է կնիք, որտեղ նշված է ամիս ամսաթիվ՝ 11.06.2021թ. և հերթական համար՝ Մ-24193-21: Գրությունը անորակ պատճենահանված լինելու պատճառով դրանում առկա կնիքը լավ չի երևում է և հասկանալի չէ թե այն ում

կողմից է դրված ՀՀ ֆինանսների նախարարության, թե «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի: Սակայն մի բան հստակ է, որ այդ կնիքը վերաբերում է կամ գրության մուտքին ՀՀ ֆինանսների նախարարություն կամ գրության ելքին «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ից: Ինչից հետևում է, որ Գրությունը ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտք եղել 11.06.2021 թ.-ից ոչ շուտ, քանի որ եթե այդ ամիս ամսաթիվը անգամ վերաբերում է գրության ելքին, ապա դա նշանակում է, որ Գրությունը «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ից ուղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարություն 11.06.2021 թ.-ին: Նշյալից էլ կարող ենք փաստել, որ 08.06.2021 թ.-ով թվագրված Գրությունը ամեն դեպքում ՀՀ ֆինանսների նախարարություն է ուղարկվել 11.06.2021 թ-ին:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից, «Էլար Գոլդ» ՍՊԸ-ի (այսուհետև նաև՝ Մասնակից) Հայտում անհամապատասխանություններ արձանագրելուց հետո Պատվիրատուն 31.05.2021 թ-ին մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հանձնաժողովի նիստը և նույն օրը ծանուցել էր Մասնակիցն՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Նշյալից հետևում է, որ ծանուցումը ուղարկելու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը՝ 02.06.2021 թ.-ին Պատվիրատուն արդեն տեղ|ակ էր, որ Մասնակցի ներկայացրած Հայտը (Հայտի շտկումը) «չեր համապատասխանում» հրավերով սահմանված պայմաններին: Հետևաբար, Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար համապատասխան հիմքերը ՀՀ ֆինանսների նախարարություն անհրաժեշտ էր ուղարկել մինչև 09.06.2021 թ.-ը, մինչդեռ այդ հիմքերը ուղարկվել են 11.06.2021 թ-ին, այսինքն՝ դրանք ՀՀ ֆինանսների նախարարություն են ուղարկվել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետի խախտումով:

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք փաստել, որ այդ հանգամանքը մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ այս Ընթացակարգը անհրաժեշտ է մերժել:»:

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 50-րդ հոդվածով՝ Մասնակիցը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Էլար Գոլդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ԼՕ-2021/166 ծածկագրով ընթացակարգը:

4. <u>ՍՑ-ԼՕ-2021/166 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ապրանքների ձեռքբերման նպատակով 14.05.2021թ.-ին հայտարարվել է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Էլար Գոլդ» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.06.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ «Էլար Գոլդ» ՍՊԸ-ի կողմից թիվ 1.1 հավելվածով չեն ներկայացվել գնման ընթացակարգի հրավերով պահանջված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

v. Արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, որոշել է մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Էլար Գոլդ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 31.05.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով անհամապատասխանությունների շտկման

վերաբերյալ նույնաբովանդակ ծանուցում է ուղարկվել Մասնակցի elargold@yandex.ru էլ. փոստի հասցեին:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ «Էլար Գոլդ» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին ներկայացվել է հայտից բացակայող Հավելված 1.1-ը, սակայն 6-րդ չափաբաժնի մասով արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ շարժիչի հզորութունը ներկայացվել է 1,7 կվտ, երկարությունը՝ 1170մմ, լայնությունը՝ 1770մմ, բարձրությունը՝ 6մմ, մինչդեռ սույն գնման ընթացակարգի հրավերով պահանջվել էր համապատասխանաբար հզորությունը՝ 1կվտ, երկարությունը՝ 1000մմ, լայնությունը՝ 1900մմ, բարձրությունը՝ 700մմ: Ուստի Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը 6-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9859-2021 գրությամբ «Էլար Գոլդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-

ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից ապրանքների ձեռքբերման նպատակով 14.05.2021թ.-ին հայտարարված «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի

կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով

կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից ապրանքների ձեռքբերման նպատակով 14.05.2021թ.-ին հայտարարված «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.06.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 7-րդ ենթակետով արձանագրվել է, որ «Էլար Գոլդ» ՍՊԸ-ի կողմից թիվ 1.1 հավելվածով չեն ներկայացվել գնման ընթացակարգի հրավերով պահանջված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Էլար Գոլդ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից 31.05.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ նույնաբովանդակ ծանուցում է ուղարկվել Մասնակցի elargold@yandex.ru էլ. փոստի հասցեին: «Էլար Գոլդ» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին ներկայացվել է հայտից բացակայող Հավելված 1.1-ը, սակայն 6-րդ չափաբաժնի մասով արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ շարժիչի հզորութունը ներկայացվել է 1,7 կվտ, երկարությունը՝ 1170մմ, լայնությունը՝ 1770մմ, բարձրությունը՝ 6մմ, մինչդեռ սույն գնման ընթացակարգի հրավերով պահանջվել էր համապատասխանաբար հզորությունը՝ 1կվտ, երկարությունը՝ 1000մմ, լայնությունը՝ 1900մմ, բարձրությունը՝ 700մմ: Ուստի Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը 6-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Էլար Գոլդ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էլար Գոլդ» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները,

խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Անդրադառնալով «Էլար Գոլդ» ՍՊԸ-ի կողմից դիրքորոշմամբ նշված մեկ այլ հիմավորմանը, համաձայն որի՝ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընթացակարգ նախաձեռնելու հիմքերն ի հայտ են եկել 02.06.2021թ.-ին, սակայն գրությունը ուղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարություն միայն 11.06.2021թ.-ին՝ չպահպանելով Կարգի 45-րդ կետով սահմանված 5-օրյա ժամկետը, ապա Բողոքներ քննող անձը փաստում է հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Վերոնշյալ նորմի համատեքստում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ հայտերի գնահատումը կայացել է 21.05.2021թ.-ից մինչև 10.06.2021թ.-ը ընկած ժամանակահատվածում, որպիսի պայմաններում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Էլար Գոլդ» ՍՊԸ-ին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընթացակարգ նախաձեռնելու հիմքերն ի հայտ են եկել 10.06.2021թ.-ին, իսկ համապատասխան հիմքերը ՀՀ ֆինանսների նախարարությունը ստացել է 11.06.2021թ.-ին՝ պահպանելով Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9859-2021 գրությամբ «Էլար Գոլդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/166 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Էլար Գոլդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**